# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«29» հոկտեմբերի 2016թ.

**Հաստատում եմ՝**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-89/16 բողոքը քննող

հանձնաժողովին

## Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2016թ. թիվ 1/73-3/17716-16 գրությամբ ներկայացված «Սամարտ-Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09811372) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

### 1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.04.2016թ. թիվ 01/61-7522 գրության հիման վրա, 04.05.2016թ. թիվ 1/73-3/13484-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել «Սամարտ-Շին» ՍՊԸ-ին (այսուհետ

նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 06.06.2016թ. թիվ 01/04.1/2173-16 գրությամբ Նախարարության 04.05.2016թ. թիվ 1/73-3/13484-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կենտրոն) կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունը մեկ անգամ խախտելու առկայությունը:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2016թ. թիվ 1/73-3/17716-16 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Սամարտ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և կից ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի 21.06.2016թ. թիվ 01/61-35705h գրությունը:

## 2. «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Սամարտ-Շին» ՍՊԸ-ն 23.05.2016թ. գրությամբ Կենտրոնին է ներկայացրել իր առարկությունները և միաժամանակ տեղեկացրել է, որ վճարել է Պայմանագրի ապահովման տուժանքը՝ 359150 ՀՀ դրամի չափով:

Վերը նշված գրությամբ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 21.04.2016թ. տրված տեղեկանքի պատճենը, որի համաձայն՝ ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը հավաստիացրել է, որ ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնող «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի աշխատակից՝

Արամայիս Սամսոնի Հարությունյանը, 2016թ. ապրիլի 2-ին ֆինանսական վարչության ստուգայցի ժամանակ եղել է դպրոցի տարածքում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով ներկայացրել է իր առարկությունները և ՍՑ-ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովին է ներկայացրել աշխատանքների ժամանակ կատարած լուսանկարները:

**3. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.04.2016թ. թիվ 01/61-7522 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագրին (այսուհետ նաև՝ Պայմանագիր) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 21.06.2016թ. թիվ 01/61-35705հ գրությամբ հայտնել է, որ Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների ստուգայցի ժամանակ շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության աշխատակցի ներկա գտնվելու վերաբերյալ տրամադրված տեղեկանքում առկա է ժամկետներին վերաբերող վրիպում:

Միաժամանակ Պատվիրատուն նշել է, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվող շրջայցերի ընթացքում 2016թ. ապրիլի 2-ին, ապրիլի 4-ին և ապրիլի 15-ին տեխնիկական հսկողը ներկա չի գտնվել շինարարական հրապարակում, որի առնչությամբ տրամադրվել է համապատասխան փաստաթղթերը:

Երևանի քաղաքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ՍՑ-ԳԲԽ-89/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2016թ. թիվ 1/73-3/17716-16 գրությամբ ներկայացված «Սամարտ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի և «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի միջև 21.03.2015թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Ընկերությունը՝ Պատվիրատուի մոտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

3. Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

4. Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանվել է հետևյալ պարտականությունը. «***շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայացումը օբյեկտում»:***

5. Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Ընկերության գործունեությանը:

6. Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Ընկերության կողմից պայմանագիրը

խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

7. Պատվիրատուն 04.04.2016թ. թիվ 09/5934 և 15.04.2016թ. թիվ 09/7050-1 գրություններով Ընկերությանը հայտնել է, որ Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության աշխատակիցների կողմից 02.04.2016թ. և 15.04.2016թ. կատարված շրջայցերի արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից պատշաճ կերպով չի կատարվել Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանված հետևյալ պարտականությունը. «շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ***ներկայությունը*** օբյեկտում»:

8. Պատվիրատուն հիմք ընդունելով այն, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանված պահանջը, այն է՝ Ընկերությունը չի ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայացումը օբյեկտում 20.04.2016թ. թիվ 61/624 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի միջև 21.03.2015թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագիրը:

9. Ընկերությունը ներկայացրել է ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 21.04.2016թ. տրված տեղեկանքի պատճենը, որի համաձայն՝ ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը հավաստիացրել է, որ ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողություն իրականացնող «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի աշխատակից՝ Արամայիս Սամսոնի Հարությունյանը, 2016թ. ապրիլի 2-ին ֆինանսական վարչության ստուգայցի ժամանակ եղել է դպրոցի տարածքում:

10. Կենտրոնը 06.06.2016թ. թիվ 01/04.1/2173-16 գրությամբ Նախարարության 04.05.2016թ. թիվ 1/73-3/13484-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում (այսուհետ՝ Կենտրոն) կատարված

ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագրով ստանձնած պարտավորությունը մեկ անգամ խախտելու առկայությունը:

11. Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 04.07.2016թ. թիվ 1/73-3/17716-16 գրությամբ հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Սամարտ-Շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ և կից ներկայացրել է Երևանի քաղաքապետարանի 21.06.2016թ. թիվ 01/61-35705h գրությունը և ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 15.06.2016թ. գրությունը:

12. ՀՀ Երևանի քաղաքապետարանի «Յ. Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը 15.06.2016թ. գրությամբ Երևանի քաղաքապետարանին հայտնել է, որ «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի աշխատակից Արամայիս Սամսոնի Հարությունյանին 21.04.2016թ. տրված տեղեկանքում թույլ է տրվել վրիպում, որը չի համապատասխանում իսկությանը ստուգման ամսաթվի և տեղեկանքի տրման ժամանակի վացեմության պատճառով:

Վերը նշված գրությամբ նշվել է, որ կատարվել է հարցում-ստուգում, որի համաձայն ֆինանսական վարչության ստուգայցի ժամանակ Արամայիս Սամսոնի Հարությունյանը չի եղել դպրոցի տարածքում:

**5. ՍՅ-ԳԲԽ-89/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2016թ. թիվ 1/73-3/13484-16 և 04.07.2016թ. թիվ 1/73-3/17716-16 գրությունները, Երևանի քաղաքապետարանի 22.04.2016թ. թիվ 01/61-7522 և 21.06.2016թ. թիվ 01/61-35705h

գրությունները և կից փաստաթղթերը, Ընկերության 23.05.2016թ. և 29.11.2016թ. գրությունները, հայտնում է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի և «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի միջև 21.03.2015թ. կնքվել է «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագիր:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Ընկերությունը՝ Պատվիրատուի մոտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, ստանձնում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Պայմանագրի թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանվել է հետևյալ պարտականությունը. «***շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայացումը օբյեկտում»:***

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Ընկերության գործունեությանը:

Պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ընկերությունը էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Ընկերության կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Պատվիրատուն 04.04.2016թ. թիվ 09/5934 և 15.04.2016թ. թիվ 09/7050-1 գրություններով Ընկերությանը հայտնել է, որ Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության

աշխատակիցների կողմից 02.04.2016թ. և 15.04.2016թ. կատարված շրջայցերի արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից պատշաճ կերպով չի կատարվել Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանված հետևյալ պարտականությունը. ***«շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում»:***

Պատվիրատուն հիմք ընդունելով այն, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանված պահանջը, այն է՝ Ընկերությունը չի ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայացումը օբյեկտում 20.04.2016թ. թիվ 61/624 գրությամբ միակողմանի լուծել է Երևանի քաղաքապետարանի և «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի միջև 21.03.2015թ. կնքված «ԵՔ-ԲԸԾՁԲ-16/68» ծածկագրով գնման պայմանագիրը:

Այսպիսով, «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունը խախտվել է մեկ անգամ, այն է՝ պատշաճ կերպով չի իրականացվել Պայմանագրի N 1 հավելվածի 3-րդ ենթակետի 16-րդ պարբերությամբ սահմանված ***«շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխնիկական հսկիչի մշտական ներկայացումը օբյեկտում» պարտականությունը,*** ինչն էլ հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում՝ ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սամարտ-Շին» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունը խախտվել է մեկ ագամ, ուստի առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 04.07.2016թ. թիվ 1/73-3/17716-16 գրությամբ ներկայացված «Սամարտ-Շին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 09811372) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան